ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 637-Ա

28 հոկտեմբերի 2026 թ.

ՄԱՐԻ ԵՐԵՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները և Մարի Երեմյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարի Երեմյանին տրամադրել 2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 29-ից 2026 թվականի նոյեմբերի 11-ը ներառյալ (10 աշխատանքային օր):

2. Մարի Երեմյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական

ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Անի Գրիգորյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

28.10.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108[illegible]503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ